Վ. Դ. ԱԶԱՏՅԱՆ

1991 թ. դեկտեմբերի 28-ին իր մանկանացուն կնքեց ֆիմիկոսների շրջանում հաշ հայտնի, վաստակաշատ գիտական ու մանկավարժ Վառաշ Դավթի Ազատյանը: Նա բազմակողմանի զարգացած ու չափազանց բարեկիրթ անձնավորություն էր, ճանաչված Ներսիսյան դպրոցի վերջին շրջանավարտներից մեկը:

Վ. Դ. Ազատյանը ծնվել է Թիֆլիսում, 1904 թ. հունվարի 14-ին: Ավարտել է տեղի վանքի ծխական դպրոցը և 1913 թ. ընդունվել Ներսիսյան դպրոցը: 1924 թ. տեղափոխվել է Երևան և ընդունվել համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը: Մանկավարժական և գիտական գործունեությունն սկսել է դեռևս ուսանողական տարիներին (1928 թ. նա նշանակվել է նույն ֆակուլտետի ասիստենտի պաշտոնում): Ավարտել է համալսարանի գյուղատնտեսության ֆակուլտետի կենսաբանության (1930) և ֆիմիայի (1931) բաժինները: Նկատի ունենալով Վ. Ազատյանի կազմակերպչական ունակությունները և բազմակողմանի զարգացածությունը՝ 1930 թ. նրան վստահեցին նոր բացվող մանկավարժական ինստիտուտի կենսաբանական և ֆիմիայի ֆակուլտետի դեկանի պաշտոնը (Հայկական մանկավարժական ինստիտուտը, որն ստեղծվել էր 1922 թ., 1928 թ. միացվել էր համալսարանին): 1932 թ. նա նշանակվեց այդ ինստիտուտի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի պաշտոնում: Այդպես էր կանխորոշել ճակատագիրը. այնտեղ, ուր պետք էր ստեղծել նորը, հաղթահարել երկունքի ծանրությունը, այնտեղ էր ուղարկվում Վ. Դ. Ազատյանը:

1933 թ. նա դարձավ համալսարանի նորաստեղծ ֆիզիկական ֆակուլտետի տոմսիկ դեկանը: Նրա ուսանողներն են եղել մեր մեծերը՝ հայ անվանի ֆիզիկոսներից շատերը:

1935 թ. Վ. Ազատյանը գործուղվել է Մոսկվա՝ Կարպովի անվան ֆիզիկական ֆիզիայի ինստիտուտի ասպիրանտուրայում սովորելու: Մեկ տարի անց տեղափոխվել է ԽՍՀՄ ԳԱ Օրգանական ֆիզիայի ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտել է 1939 թ.: Այնուհետև տեղափոխվել է Երևան և նշանակվել Արմֆանի ֆիզիայի ինստիտուտի տնօրեն: 1941—42 թթ. նա զուգահեռաբար վարել է Արմֆանի նախագահի տեղակալի պաշտոնը: 1943 թ., երբ ստեղծվեց Հայաստանի Գիտությունների Ակադեմիան, Քիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում նորից նշանակվեց Վ. Ազատյանը:

1945 թ. նա թողեց վարչական աշխատանքը և անցավ զուտ գիտական գործունեության: Այնուհետև նա լաբորատորիայի վարիչի և ավագ գիտաշխատողի պաշտոնում աշխատել է այդ, իսկ 1957-ից՝ Հայաստանի ԳԱ Օրգանական ֆիզիայի ինստիտուտում:

60-ական թվականների սկզբներին, երբ Ա. Բ. Նալբանդյանի նախաձեռնությամբ Երևանում բացվեց ֆիզիկական ֆիզիկայի գիտական լաբորատորիան, Վ. Ազատյանն իր վրա վերցրեց լաբորատորիայի ստեղծման կազմակերպչական դժվարին գործը: Ավելի ուշ՝ 1965 թ. մշտական աշխատանքի անցավ ֆիզիական ֆիզիկայի լաբորատորիայում:

Նրա գիտական աշխատանքները նվիրված են ացետիլենային միացությունների սինթեզին, կատալիտիկ երևույթներին, տարրօրգանական միացությունների և ցիկլոօկտատետրաենի ուսումնասիրմանը:

Վ. Ազատյանը գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանում ֆիզիական գիտության և արդյունաբերության ստեղծման ու զարգացման աշխատանքներին: Հայրենական պատերազմի տարիներին նրա ղեկավարությամբ գործող ինստիտուտը կատարում էր պաշտպանական նշանակություն ունեցող հետազոտություններ և իրականացնում նրանց արտադրական իրագործումը: Նրա անունը սերտորեն կապված է նաև հայերեն ֆիզիական լեզվի և տերմինաշինության զարգացման հետ: «Հայկական ֆիզիական ամսագրի» ստեղծման օրից նա գործուն մասնակցություն է ունեցել ամսագրի աշխատանքներին՝ ցուցադրելով իր՝ մասնագետի և լեզվի քաջանվուտ գիտակի ունակություններ: Վ. Ազատյանը Հայկական հանրագիտարանի ֆիզիայի գիտական նյութային խմբագրության մշտական և գործուն անդամներից էր: Նրա մասնակցությամբ են ստեղծվել նաև ռուս-հայերեն բառարանները (1954—58) և ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանները (1957):

Զգայուն ընկերոջ, շնորհալի ֆիզիկոսի, ազնիվ ու հայրենասեր հայորդու. Վաղարշ Դավթի Ազատյանի նիշատակը մշտապես կմնա մեր սրտերում: